



ԽՈՐԱՑՐԵՔ ԶԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Ինչ տեղի կունենա, եթե մեր մոլորակի ներկայիս միջին տարեկան ջերմաստիճանը բարձրանա 2 աստիճանով

• **Քնեռային սառույցների հալման գործընթացը կարագանա:** Այս պրոցեսն իր մեջ մի շարք վտանգներ ունի: Սառցադաշտերն իրենց մեջ պահած ունեն մեթան գազի բավական մեծ պաշարներ: Սառույցի հալման դեպքում դրանք կարտանետվեն մթնոլորտ և կուժեղացնեն ջերմոցային էֆեկտը: Արդյունքում Երկրի ջերմաստիճանի բարձրացումը նոր թափ կստանա, ինչն էլ իր հերթին ավելի կարագացնի սառույցների հալումը: Սառցաշերտերի հաստությունը որոշ տեղերում մինչև 4 կմ-ի է հասնում, որը բավական մեծ ճնշում է գործադրում Երկրի մակերևույթին: Եթե հալման հետևանքով այդ ճնշումից Երկրի մակերևույթն ազատվի, ապա հավանականությունը մեծ է, որ ակտիվանան հրաբխային պրոցեսները: Դրանց ժայթքումները մթնոլորտ կարտանետեն մեծ քանակությամբ ածխաթթու գազ և այլ թունավոր գազեր ու աէրոզոլներ: Դրանք կուժեղացնեն ջերմոցային էֆեկտը՝ իր սպառնալի հետևանքներով:

• **Համաշխարհային օվկիանոսի մակարդակը կբարձրանա:** Մեկ մետրով օվկիանոսի մակարդակի բարձրացման արդյունքում, որը հավանական է համարվում մեր դարի վերջերին, հսկայական տարածքներ կանցնեն ջրի տակ: Միլիոնավոր մարդիկ գոհ կդառնան բարձր ինտենսիվությամբ և հաճախությամբ ջրհեղեղների, ուրագանների, փոթորիկների:

• **Համաշխարհային օվկիանոսի թթվայնությունը կմեծանա:** Սա հետևանք է զանազան թունավոր գազերով ու աէրոզոլներով աղտոտված մթնոլորտում առաջացող թթվային անձրևների ինտենսիվացման: Արդյունքում մի շարք ձկնատեսակներ կանհետանան, կնվազի ձկնաբուծությունը:

• **Օդի խոնավության աստիճանը կբարձրանա:** Սա բարձր ջերմաստիճանի պատճառով գոլորշացման պրոցեսների ինտենսիվացման հետևանք է: Արդյունքում օվկիանոսին ափամերձ տարածքներում մարդկանց բնակության համար անտանելի պայմաններ կստեղծվեն:

• **Նոր թափ կստանա տարածքների անապատացման պրոցեսը:** Բարձր ջերմային ռեժիմի պայմաններում կուժեղանան գոլորշացման պրոցեսները, ինչը շատ տեղերում կհանգեցնի ջրի պաշարների նվազման և արդյունքում՝ հողերի անապատացման: Երաշտների կրկնման հաճախությունը կմեծանա, կնվազի հողի բերքատվությունը: Հաճախակի կդառնան անտառային հրդեհները:


• **Կուժեղանա կենսաբազմազանության նվազման արդեն իսկ դիտվող պրոցեսը:** Շատ կենդանատեսակներ և բուսատեսակներ չկարողանալով հարմարվել արագ փոփոխվող կլիմայական պայմաններին, կոչնչանան: Որոշ տեսակներ (օրինակ՝ սպիտակ արջերը) ստիպված կլինեն փոխել իրենց բնակության վայրերը,

և մեծ հարց է՝ կկարողանան հարմարվել համեմատաբար տաք եղանակային պայմաններին:

- **Մեծ տարածում կատանան մի շարք հիվանդություններ:** Տաք տարածքները ապրելու և բազմանալու լավ պայմաններ կստեղծեն մոծակների համար, որոնք շատ հիվանդություններ կտարածեն Երկրի հյուսիսային շրջաններում. մալարիա, մլակային տենդ, դենգեյի տենդ և այլն:

Ինչ պետք է անել:

Կլիմայագետների շրջանում իշխող է այն համոզմունքը, որ գլոբալ տաքացումն է ներկայիս կլիմայական փոփոխությունների ամենաորոշիչ պատճառը: Եվ, ուրեմն, պետք է կանխել գլոբալ տաքացումը, ասել է, թե կանխել կամ նվազագույնի հասցնել ջերմոցային գազերի արտանետումը մթնոլորտ: Գնահատականները ցույց են տալիս (նկ. 5.3), որ ջերմոցային գազերի արտանետման ոլորտում առաջատարը Չինաստանն է, այն գեներացում է աշխարհում արտադրվող բոլոր ջերմոցային գազերի շուրջ 30%-ը: Նրան հաջորդում են ԱՄՆ-ը (11,3%) և Հնդկաստանը (7,8%):



Նկար 5.3. Ջերմոցային գազեր մթնոլորտ արտանետող հիմնական պետությունները: